

ՊՂՂԵՍԻՆՑԻ ԵՒ ԻՍՐԱՅԷԼԱՅԻ ԲԱՆԱԳԱՑՆԵՐԸ ՈՒՎՇԻՆԿԱԾՆԻ ՄԷՁ

Իսրայելացի եւ պաղեստինցի բանագնացները երկ հասան Ուաշինգթոն, ուր տեղի պիտի ունենան խաղաղութեան բանակցութիւններ: Պաղեստինեան պատմաբանները կը գիտատրէ Սաէյ Ուրալքաթ, մինչ իսրայելեան ժիլետ Շէր: Իսրայելի արտաքին գործոց նախարար Շլոմո Պըն Ամի աւելի ուշ պիտի հասնի Ուաշինգթոն: Սաէյ Ուրալքաթ թղթակցներուն ըսաւ. «Անկեղծ ըլլալու համար ըսեմ, որ այս բանակցութիւններէն մեծ ակնկալութիւններ չունին»: Նմանօրինակ խոստարարութիւն կատարեց նաեւ Շէր, աւելցնելով սակայն, որ «կը կարծենք, թէ առիթը կայ տակաւին բան մը փրկելու եւ պէտք է փորձենք այդ մէկը»:

Երկու կողմերը առանձին տեսակցութիւններ պիտի ունենան ամերիկացի բանագնաց Տէնիս Ռոսի հետ, սակայն հաւանական է նաեւ, որ աւելի ուշ անոնք ունենան ուղղակի տեսակցութիւններ իրարու հետ եւ տոյնիսկ եռակողմանի հանդիպումներ, ամերիկեան կողմին մասնակցութեամբ:

Մինչ այդ, պաղեստինեան իշխանութեան նախագահ Եսսէր Արաֆատ Գահիրէի մէջ տեսակցութիւն մը կ'ունենար Եգիպտոսի նախագահ Հիւսի Մուպարաբի հետ, գլխաւորաբար վերոյիշեալ հարցին առնչութեամբ:

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ԳՈՒՄԱՐԵՑ ՕՐԵՆՍԳՐԱԿԱՆ ԻՐ ԱՆԳՐԱՆԻԿ ԺՈՂՈՎԸ

Խորհրդարանը երէկ գումարեց օրէնսդրական իր անդրանիկ նիստը, որուն ընթացքին վաւերացուց ընթացակարգով օրինագիծներ եւ քուէարկութեամբ որոշեցին պաղեստինցի գաղթականներու բնակեցումը մերժող օրինագիծ մը: Նիստին վաւերացուցան 23 այլ օրինագիծ եւ օրէնքի առաջարկ:

Նիստը գումարուեցաւ կէսօրէ առաջ ժամը 10:30ին, զիւստուրութեամբ խորհրդարանի նախագահ Նեպիտ Պըրրի: Ներկայ էին վարչապետ Ռաֆիք Հարիրի, փոխ վարչապետ Իսամ Ֆարէս եւ 18 նախարարներ:

Նիստը սկսաւ մէկ վայրկեան յոտնկայս լուռութեամբ, առ ի յարգանք նոր մահացած նախկին երեսփոխաններ Զաքի Մազպուտիի եւ Արա Երեւանեանի յիշատակին:

Շար.՝ էջ 2

ԴԵՄՊԱՆ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ ԱՅՅԵԼԵՑ ՊՈՒՐՃ ՀԱՍՈՒՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻՆ

Երկ, Լիբանանի մէջ Հայաստանի դեսպան Արման Նաւասարդեան այցելեց Պուրճ Համուտի քաղաքապետարան եւ տեսակցեցաւ քաղաքապետ Անդրանիկ Մարրիւսեանի հետ: Զննարկուեցան Հայաստանի քաղաքներէն մէկուն եւ Պուրճ Համուտի միջին քարեկամութեան համաձայնագիր ստորագրելու ծրագիր մը:

Դեսպանը քաղաքապետին փոխանցեց Երևանի քաղաքապետի տեղակալ, մայրաքաղաքի գլխաւոր ճարտարապետ Նարեկ Սարգսեանի պատրաստակամութիւնը՝ Պլյուշ ռոզարկելու մասնագէտներ, որոնք օժանդակեն Պուրճ Համուտի վերակառուցման եւ ճարտարապետական ձեւաորման աշխատանքներուն:

ՅԱԻԱԿՅԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ

Հ. Յ. Դ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէն եւ Հայկական Երեսփոխանական Պլոքը ԱՐԱ ԵՐԵՒԱՆԵԱՆԻ մահուան առիթով ցաւակցութիւններ կ'ընդունին այսօր՝ 20-րէքտաբթի, 20 Դեկտեմբեր, «Սարդարապատ» ակումբին մէջ, կէսօրէ ետք ժամը 3:00էն 9:00:

ՄԱՀԱԶԴ

Համագայիցի Կեդրոնական Վարչութիւնը խոր ցաւով կը գուժէ իր նախկին անդամներէն, Համագայիցիի եւ ձեւարանի բարերար


ԱՐԱ ԵՐԵՒԱՆԵԱՆԻ

մանր, որ պատահեցաւ Կիրակի, 17 Դեկտեմբեր 2000ին:

ՄՕՏ ՕՐԵՆ ԱՍՏ ՕՐԵՆ ԼՈՅՍ ԿԸ ՏԵՄԵ

«ԱԶԴԱԿ» ՕՐԱԹԵՐԹԻ

ԱԶԴԱԿ



ՆՈՐ ՏԱՐՈՒԱՆ ԲԱՅԱՌԻԿԸ

ՊԵՆԻԱՄԻՆ ՆԵԹԱՆԻԱՇՈՒ ԸՐԱԺԱՐԵՑԱԻ ԿԱՐԶԱՊԵՏԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԹԵԿՆԱԾՈՒԹԻՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼԷ

Իսրայէլի նախկին վարչապետ եւ աջակողմեան ղեկավար Պենիամին Նեթանիահու երէկ հրաժարեցաւ վարչապետական ընտրութիւններու թեկնածուութիւն ներկայացնելէ, որովհետեւ խորհրդարանը մերժած էր ըստման մը, որ կ'առաջարկէր վարչապետի կողքին ընտրել նաեւ նոր խորհրդարան մը:

Նեթանիահուի հեռացումով, ապարիզը բաց կը մնայ Լիքուտի ղեկավար Արիէլ Շարոնի դիմաց, որ ընտրապայքար պիտի մղէ վարչապետ ինքնուրու Պարաշի դէմ: Այս ընտրութիւնները կարելի էր նկատուի, որովհետեւ անոնց արդիւնքն է, որ պիտի վճռէ պաղեստինեան իսրայէլեան խաղաղութեան գործընթացին ճակատագիրը:

Միւս կողմէ, Աշխատանքական Կուսակցութեան նախկին ղեկավար եւ վարչապետ Շիմոն Փերէս եւս կը մտածէ վարչապետի թեկնածուութիւնները կայացնելու մասին: Փերէս, որ երկար ատենէ ի վեր լուռ էր, երէկ յայտնեց, որ տակաւին որոշում չէ տուած, հակառակ անոր, որ իսրայէլացի ժողովուրդը իր մէջ կը պահանջէ անկախ թեկնածուութիւն

մը ներկայացնելու ընտրապայքար մղել Շարոնի եւ Պարաշի դէմ:

Վարչապետի ընտրութիւնները պիտի կայանան ֆետուարին, յարգելու համար սահմանադրութիւնը, որ կը պահանջէ վարչապետի մը հրաժարականին յաջորդող վաթսուց օրուան ընթացքին կայացընել ընտրութիւնները:

Նեթանիահու երկուշաբթի գիշեր ծանր հարուած մը ստացաւ Քնեսէթէն, որ 48ի դէմ 88 քուէով մերժեց խորհրդարանը լուծելու երեսփոխանական կանխահաւ ընտրութիւններ կազմակերպելու օրինագիծը: Նեթանիահուի խորհրդատուներէն՝ Աւիգ Պուշինսքի ըսաւ, որ նախկին վարչապետը ընտրապայքարին վր հեռանայ Լիքուտին եւ վարչապետին համար: Պուշինսքի աւելցուց, որ Լիքուտի միակ թեկնածուն Շարոնն է:

Քնեսէթի արար իսրայէլացի երեսփոխանները իրենց կարգին հանդիպում



Պենիամին Նեթանիահու

մը պիտի ունենան այսօր՝ որոշելու համար իրենց թեկնածուն իսրայէլի վարչապետութեան համար: Ապտիլ Մալէք Տահաձէ եւ Ահմէտ Թիլպի կը նկատուին հաւանական թեկնածուներ:

ԱՊԱՇՏՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ ԴՊՈՒՆ ԿԸ ՊԱՇԵ ՊՂՂԵՍԻՆՑԻՆԵՐԸ

ՄԱԿԻ Ապահովութեան Խորհուրդը մերժեց պաղեստինեան պահանջ մը, որ կ'առնուի պաղեստինեան շրջաններ միջազգային խաղաղարար ուժեր ուղարկելու հարցին: Պաղեստինցիներուն ներկայացուցած բանաձեւը, որ գինուորական ղեկներ կը պահանջէր կազմելու Այսրյոզդանանի մէջ, ապահովեց միայն ուժ երկիրներու զօրակցութիւնը: 15 երկիրներէ ընդկացած խորհուրդին մէջ որեւէ բանաձեւ ընդունելու համար կարիքը ունի ինը քուէներու:

Քուէարկութեան ընթացքին ձեռնպահ մնացին Միացեալ Նահանգներ, Ռուսիա, Բրիտանիա, Ֆրանսա, Արժանթին, Հոլանտա եւ Բանտա, որոնք դիտել տուին, թէ նման բանաձեւի մը որ-

Շար.՝ էջ 10

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ԴԱՏԻ 3ԱՆՁՆԱԽՈՒՄԲԸ ԿԸ ՇՆՈՐՀԱՒՈՐԷ ՆԱԽԱԳԱՅ ԳՈՐԾ ՊՈՒՇԸ

Ամերիկայի Հայ Դատի Ցանձնախումբը Երկուշաբթի օր շնորհակարարական նամակ մը յղեց Միացեալ Նահանգներու նորընտիր նախագահ Ճորճ Պուշին:

Հայ Դատի Ցանձնախումբը մասնաւորաբար կը յիշեցնէ նախագահ Պուշին ընտրապայքարի ընթացքին Հայկական Ցեղասպանութեան վերաբերեալ կատարած իր խոստումը: Նամակին մէջ կը նշուի, թէ «ամերիկացիներ անհամբեր են, որ դուք յարգե՞ք ձեր խոստումը եւ Հայկական Ցեղասպանութիւնը բնութագրէ՞ք իր բնութեան իրականութիւնը»:

19 Փետրուարին նորընտիր նախագահ Պուշին յայտարարեց իր «Հայերը ենթարկուած են Ցեղասպանական արարքի, որ մարդու ըմբռնելու կարողութեան մարտահրաւէր կ'ուղղէ: Այդ արարքը նաեւ կը հրամայէ, որ բոլոր ազնիւ ժողովուրդները յիշեն եւ ճանչնան մարդկութեան դժար ճակատին ոճիրներով դարձ մը ընթացքին տեղի ունեցած ցաւալի ոճիրը մը իրողութիւնները եւ դատերը: Եթէ նախագահ ընտրուի, պիտի երաշխաւորեմ, որ մեր ազգը պատշաճ կերպով ճանչնայ Հայ ժողովուրդի ողբերգական տառապանքը»:

ՀԱՅԿԱԿԱՆ ՕԴԱՆԱԻ ՄԸ ԷՋՔ ԿԱՏԱՐԵՑ ՊԱՂՏԱՏԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕԴԱԿԱՅԱՆ

5000 թոն դեղորայքով եւ ուսեստեղծով բեռնաւորուած Հայկական օդանաւ մը Երկուշաբթի օր էջք կատարեց Պաղատի միջազգային օդակայան:

Օժանդակութիւնը փոխադրող Հայկական պատուիրակութեան մաս կը կազմէին քաղաքական գործիչներ եւ գործարարներ, որոնց կարգին նախկին վարչապետ Արամ Սարգսեան: Թիւիքը կազմակերպուած է Հայ-իրաքեան խորհրդարանական բարեկամութեան խմբակին կողմէ: Խմբակին նախագահ Հուկոս Ուլիխանեան յայտնեց, որ օժանդակութիւնը տրամադրած են Հայ գործարարներ, որոնք մաս կը կազմեն Հայկական պատուիրակութեան:

(ԱՐՄԵՆՓՐԵՍ, Ա. Է. Ֆ. ՓԷ.)

ԳԵՐՄԱՆԻԱ ԹՐՔԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ ՄԸ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ ՃԱՆՉՆԱԼՈՒ ԿՈՉ ԿՈՒՂՂԷ

Հոյանտա հրատարակուող «Քաթոլիք» թերթը իր Դեկտեմբեր 17ի թիւով հաղորդեց, թէ Գերմանիա հաստատուած թրքական կազմակերպութիւն մը կոչ րրած է Հայկական Ցեղասպանութիւնը ճանչնալու եւ համարի գտնուած է Աստիլի մէջ (Հոյանտա) Ցեղասպանութեան նուիրուած յուշակոթողի մը կառուցումին:

Մտօք է, որ Հոյանտայի ճշմարիտ քաղաքին մէջ Հայկական Ցեղասպանութեան յուշակոթողի մը կառուցումը իրարանցում ստեղծած է Հոյանտայի թուրք համայնքին ներս: Առարկուութիւններու ճանչնալու եւ համարի գտնուած իրարանցում կառուցումը քաղաքապետարանին թելադրած է չեղեալ համարել յուշակոթողին արտօնութիւնը տալու սկզբնական որոշումը, Շար.՝ էջ 10

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԿԸ ՇՆՈՐՀԱՒՈՐԷ ՆԱԽԱԳԱՅ ԳՈՐԾԸ

Արամ Ա. կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ հետեւեալ շնորհաւորական գիրը յղեց Ամերիկայի Միացեալ Նահանգներու նորընտիր նախագահ Ճորճ Պուշին:

Սիրելի՛ պրն. նախագահ, Յանուն Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան, ինչպէս նաեւ այս Սուրբ Աթոռին ենթակայ Միացեալ Նահանգներու մեր համայնքներուն եւ անձնապէս, կը շնորհաւորեմ Ձեր ընտրութիւնը, որպէս Ամերիկայի Միացեալ Նահանգներու 43րդ նախագահ:

Մեր սպասումն է եւ յոյսը միանգամայն, որ Ձեր ընտրութիւնը նոր թափ տայ Միացեալ Նահանգներու յանձնառութեան՝ ի խնդիր արդարութեան, խաղաղութեան եւ ժողովուրդներու միջեւ հասկացողութեան:

Թող Աստուած զօրացնէ Ձեզ հոգեպէս ու ֆիզիքապէս, որպէս ի կարենաք Ձեզի վստահուած պաշտօնը կատարել աշխարհի պատմութեան այս ճակատագրական հանգրուանին:

Թող Աստուած օրհնէ Ամերիկայի Միացեալ Նահանգները:

Աղօթարար ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՀԱՅ ՀԱՍՆԱՐԱՆԱԿԱՆ ՈՒՍԱՆՈՂՈՒԹԵԱՆ ՇԵՏ

«ԿԱՌՉԱԾ ԿԸ ՄՆԱՆՔ ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅՈՒԹԵԱՆ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐՈՒՄ» ԿԸ ՅԱՅՏԱՐԱՐԷ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ

Կիրակի, 17 Դեկտեմբերին, կաթողիկոսարանի դահլիճին մէջ տեղի ունեցաւ հանդիպում մը Հայ համալսարանական ուսանողութեան եւ Արամ Ա. կաթողիկոսին միջեւ: Ներկայ էին Հայաստանի դեսպանը, մտաւորականներ եւ ազգայիններ:

Հանդիպման սկիզբը վեհափառ ուսանողներուն ներկայացուց ՄԱԿի ընդհանուր քարտուղար Քոֆի Անանի ներկայացուցիչը Պաւլ Տէյնը: Վերջինս ներկայացուց Լիբանանի իր այցելութեան նպատակը եւ շեշտեց կրօններու միջեւ գործակցութեան անհրաժեշտութիւնը:

Շար.՝ էջ 2

ԿԱՂԱՆԴԻ ԼԱՄԱԳՈՅՆ ՆՈՒԷՐԸ

ՀԱՅՈՒԹԵԱՆ ԵՒ ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՄԱՐ

Պատմական - վկայակոչական ընդլիցի գիրք մը, որ կը ներկայացնէ 1975-1990 լիբանանահայութեան ինքնապաշտպանութեան առօրեան իր զանազան երեսներով: 416 էջ, 11 գլուխ:

- Ազգային եւ քաղաքական փորձառութիւններ
- Արժեւորումներ
- Պատմութեան համար
- Վկայութիւններ եւ վերջիւումներ
- Ուղեւոր կը յիշե՞ք...
- Յիշատակելիները
- Հ.Յ.Դ.ի եւ Հայութեան դէմ ոճիրներ
- Հայրենական արձագանքներ
- Սփիւռեան արձագանքներ
- Հին օրերու վկայութիւններ նոր օրերու համար
- Թիւկուքի աշխատանքները

Ստանալ «Այդակ»ի ցրուելներէն եւ հետեւեալ զրախանութիւններէն. — «Համազգային», «Նարեկացի», «Ոսկեղար», «Ուրֆայեան», «Obelix», «Կոմիտաս», «Շիրակ» եւ «SAVA» (Այնճար): Սակ՝ 15,000 լ. ու:

«ԿԱՌՉԱԾ ԿԸ ՄՆԱՆՔ ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅՈՒԹԵԱՆ...»

Շարունակում Ա. Էջեմ

Այնուհետև վեհափառը իր պատկերացումը փոխանցեց երիտասարդության դերակատարության շուրջ, ընդհանրապես ընկերային կենսաբան և մասնատրապիստ հայ կենսաբան մէջ:

Արամ Ա. կաթողիկոս ուսանողության ուղղած իր խօսքին մէջ քառու. «Լիբանանահայ երիտասարդութիւնը կրօնում է ազգային կառոյցներուն եւ հաւաքական կենսաբան նոր ուղղութիւն տալու ազգային արժէքներուն եւ աւանդութիւններուն նկատմամբ իր ունեցած նախանձախնդրութեամբ, ազգային պատկանելիութեան իր գիտակցութեամբ եւ իր ունեցած մասնագիտութեամբ»:

Վեհափառը լայնունք իր փափաքը, որ հայ ազգային - հասարակական կենսաբան մէջ շարունակուող վիճաբանութիւնները, մասնաւոր մասնաւոր ճանաչող, վերջ գտնեն: Ան յայտնեց, որ լիբանանահայութեան համար Լիբանանի շահերը վեր են համայնքային շահերէն: Անոր համար այլ լիբանանեան տագնապի առաջին իսկ օրէն լիբանանահայութիւնը միշտ խօսած է երկրին նկատմամբ իր պարտաւորութիւններուն եւ ո՛չ իր իրաւունքներուն մասին:

Ան հարց տուաւ սակայն, թէ այս ամբողջ իրականութեամբ հանդերձ, ինչու է կը վազուրի հայ համայնքին իրաւունքները եւ ինչու է նոր կառավարութեան մէջ երկրորդ հայ նախարար ունենալու հայ համայնքին իրաւունքը չի տրուիր եւ քաղաքական սակարկութեան նիւթ կը դառնայ:

Հաստատելէ ետք, որ Լիբանանի ներկայ կառավարութեան մէջ հայ համայնքը երկու նախարար ունենալու իրաւունք ունի, վեհափառը միաժամանակ յայտնեց, որ՝ ապահովագրութիւնը կը մնանք մեր համայնքի արդար իրաւունքին եւ կը սպասենք, որ այս հարցը շուտով իր ճիշդ լուծումը գտնեն:

Ան նաեւ կը նշողէր, որ հայ երիտասարդութիւնը, եւ ի մասնաւորի համայնքարանձակները անտարբեր մնան լիբանանահայութիւնը յուզող հարցերուն նկատմամբ, պատասխանատուութեան ոգին վարունքին անոնց հետ եւ գործնապէս մասնակից դառնան ազգային կենսաբան:

Արամ Ա. կաթողիկոս նշեց, որ «Լիբանանահայութիւնը եւ մեր ամբողջ ազգը պարտաւորութիւններ ունին համայնքարանձակներու մէջ ուսանող երիտասարդութեան նկատմամբ, մասնաւոր նիւթապէս»:

«Մեր հաւատարմութիւնը, եթէ իրապէս նախանձախնդիր են մեր ազգին ազգային նկատմամբ, պարտաւոր պէտք է պահանջուին սատար հանդիսանալու համայնքարանձակներու հայ ուսանողներուն», եզրակացուցաւ:

Իր խօսքի արարտին վեհափառը պատասխանեց իրեն ուղղուած շարք մը հարցումներու, որոնք կ'առնչուէին 1700 մեակներու, Հայ Եկեղեցւոյ, Սփիւռքին եւ Լիբանանահայութեան:

ՄԱՀԱԶԴ

- Տիկին Մարիա Արոյեան
- Տիկին Ծաղիկ Արոյեան
- Տէր եւ տիկին Ժորժ Արոյեան եւ զաւակունք
- Տէր եւ տիկին Սերոբ Արոյեան եւ զաւակունք
- Տէր եւ տիկին Հայկ Լեփէճեան եւ զաւակունք
- Տիկին Մարի Եղիազարեան
- Տիկին Ովսաննա Գալէնտէրեան եւ զաւակունք
- Պապուճեան ընտանիք
- Տուգապապանեան ընտանիք
- Գարոյեան ընտանիք
- Փանոսեան ընտանիք
- Գարագոզեան ընտանիք
- Եւ Համայն ազգականներ կը գուժեն իրենց ամուսնոյն, զաւակին, եղբոր, հորեղբոր, փեսային եւ հարազատին՝

ԺԱՆ ԱՐՈՅԵԱՆ - ՊԱՊՈՒՃԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Ուրբաթ, 15 Դեկտեմբեր 2000ին, Փաստենա, Լոս Անճելըս:

Յուզարկաւորութեան արարողութիւնը կատարուեցաւ Երեքշաբթի, 19 Դեկտեմբեր, առաւօտեան ժամը 11:00ին, Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ, Փաստենա, ուրկէ Հանգուցեալին մարմինը փոխադրուեցաւ Ֆորէսթ Լօն, Նորթ Հոլիվուտ, Պրայմթիզ գերեզմանատունը:

- Ներկայ ընդունիլ իբրեւ մահապղ:
- Ցաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին եղբոր՝ Սերոբ Արոյեանի բնակարանը, Ժեմթաուի, Դորոգորեան շէնք, Չորեքշաբթի 20 եւ Հինգշաբթի 21 Դեկտեմբերին:

ՄԱՀԱԶԴ

- Տիար Գեղամ Սիսեռեան
- Տէր եւ տիկին Պերճ եւ Սիւզան Սիսեռեան եւ զաւակները՝ Վահիկ եւ Նուռ Անի
- Տէր եւ տիկին Հրաչ եւ Էլիզապէթ Սիսեռեան եւ զաւակները՝ Կարինէ, Արամ եւ Նայիրի
- Տէր եւ տիկին Արա եւ Վերա Սիսեռեան եւ զաւակը՝ Վարազ
- Տէր եւ տիկին Յարութ եւ Չեփիւռ Պազգալեան եւ զաւակը՝ Կարէն
- Տէր եւ տիկին Սիշէլ եւ Լիլի Թամէր եւ զաւակները՝ Քիմ եւ Լիլ
- Սիսեռեան ընտանիք
- Նաչատուրեան ընտանիք
- Սանտոսեան ընտանիք
- Սիւրճի ընտանիք
- Եւ Համայն ազգականներ կը գուժեն իրենց կնոջ, մօր, մեծ մօր, քրոջ եւ հարազատին՝

ԱԼԻՍ ՍԻՍԵՐԵԱՆԻ (ՇՆԵԱՆ՝ ԽԱՉՏՈՒՐԵԱՆ)

մահը, որ պատահեցաւ Երկուշաբթի, 18 Դեկտեմբեր 2000ին, Փարիզ:

Յուզարկաւորութիւնը պիտի կատարուի Ուրբաթ, 22 Դեկտեմբեր, առաւօտեան ժամը 10:30ին, Փարիզի Ս. Յովհաննէս - Սկրտիչ մայր տաճարին մէջ, 15 rue Jean Goujon 75008, Paris, որմէ ետք՝ հանգուցեալին մարմինը պիտի ամփոփուի Cimetiery des Batignolles, Porte de Clichy գերեզմանատան մէջ:

- Ներկայ ընդունիլ իբրեւ մահապղ:
- Ցաւակցութիւնները կ'ընդունուին Պերճ եւ Սիւզան Սիսեռեաններուն բնակարանը, Փարիզ, Ուրբաթ 22, Շաբաթ 23 եւ Կիրակի 24 Դեկտեմբեր 2000ին, ինչպէս նաեւ Արա եւ Վերա Սիսեռեաններուն բնակարանը, Մրպիէր, Լիբանան, Հինգշաբթի 4 եւ Ուրբաթ 5 Յունուար 2001ին:

ԽՈՐՀՐԳԱՐԱՆԸ ԳՈՒՄԱՐԵՑ ՕՐԵՆՍԳՐԱԿԱՆ...

Շարունակում Ա. Էջեմ

Ապա, տեղի ունեցաւ նախագահներ եւ նախարարներ զատող Գերագոյն Խորհուրդի անդամներու երկման արարողութիւնը: Արդարադատութեան Գերագոյն Խորհուրդի նախագահ Մուսիբ Հընէյն, ընդհանուր զատարանը Ատնան Ատտուժ, երեսփոխաններ Ֆարէս Պուէյզ, Նիքոլա Ֆաթթուշ, ԱնՕղասապեան, Արման Երէժյը, Ալի Հասան Սալիլ եւ Ֆայէզ Ղըսըն տուին երկու մը:

Հարգող Ապտէլ Հասի Մահմուդ նշանակուեցաւ լրատուութեան ազգային խորհուրդի անդամ, երեսփոխան Նասիբ Քընտիլի տեղ: Նշանակուժ կատարուեցաւ, որովհետեւ խորհրդարանի նախկին նախագահ Հիւսէյն Հիւսէյնի դիտել տուաւ, թէ սահմանադրութեան ճշգրտ պարագաներէն նիստի ընթացքին ընտրութիւն կատարելը հակասահմանադրական պիտի ըլլայ: Խորհրդարանի նախագահ Պըրրի Հաստատեց այս պարագան, նկատել տալով, որ ճիշդ այս պատճառով օրակարգին մէջ «Նշանակում» բառը կը յիշուի:

Նիստին ընթացքին խօսք առին 17 երեսփոխաններ, որոնցմէ ոմանք արծարծեցին պատերազմի տարիներուն ընթացքին անհետացածներու հարցը, ինչպէս նաեւ կառավարութեան տնտեսական քաղաքականութեան վերաբերեալ հարցեր:

Երեսփոխան Պուէթրոս Հարպ իր խօսքին մէջ քննադատեց պաղեստինցիներու ընդհանուր անկեցումին համաձայնութեան մը մասին տարածախնդրութիւնները եւ զարմանք յայտնեց «անհետացած»ներու թղթածրարը փակելու պահանջներուն համար: Ան պահանջեց Սուրիոյ Հաստատութեան կարգաւորման Միջազգային կարմիր խաչի գլխաւորութեամբ յանձնարարութիւնը, ստուգելու համար այս պարագաները: Հարպ նաեւ նկատել տուաւ, որ երկրին մէջ ներքին հարցեր հրահրելու համար կարգաւորման խորհուրդը պիտի լինի, եւ որոշ կողմեր կը քաջալերեն ոմանց՝ թշնամական հաղորդագրութիւններ հրատարակելու: Ան կող ուղղեց վերջ ղնելու համայնքային լարուած մթնոլորտին, որ շարունակուելու պարագային կրնայ անբարձալի հետեւանքներ ունենալ:

ՄԱՀԱԶԴ

- Տիար Ժորժ Տէր Թորոսեան եւ զաւակները՝ Արման եւ Ժիլպէրթ
- Օրբորդներ Աշխէն եւ Ռիթա Ճըրեաններ
- Տէր եւ տիկին Յակոբ եւ Արեգ Սերոբեան եւ զաւակունք
- Տիկին Ռիմա Ճըրեան
- Տէր Թորոսեան ընտանիք
- Ճըրեան ընտանիք
- Սերոբեան ընտանիք
- Եւ Համայն ազգականներ կը գուժեն իրենց կնոջ, մօր, մեծ մօր, քրոջ եւ հարազատին՝

ԹԻՆԱ ՏԵՐ ԹՈՐՈՍԵԱՆԻ (ՇՈՆԵԱՂ՝ ՃԸՐԵԱՆ)

մահը, որ պատահեցաւ Երեքշաբթի, 19 Դեկտեմբեր 2000, առաւօտեան ժամը 11:00ին:

Յուզարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի այսօր՝ Չորեքշաբթի, 20 Դեկտեմբեր, կէսօրէ ետք ժամը 3:00ին, Հայ Կաթողիկէ Ս. Եղիա եկեղեցւոյ մէջ, Տրպիզ հրապարակ, ուրկէ Հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Ֆըրն Շրպիէի Հայ Կաթողիկէ գերեզմանատունը:

- Ներկայ ընդունիլ իբրեւ մահապղ:
- Ցաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը, Անթիլիաս, տաք: Սպիտակ փողոց, Ապպուտ Մուսայիթ շէնք, Յրպ յարկ, Չորեքշաբթի 20, Հինգշաբթի 21 եւ Ուրբաթ 22 Դեկտեմբերին:

ՄԱՀԱԶԴ

- Տիկին Հուրի Երեւանեան եւ զաւակները՝ Շահէ եւ Սերժ
- Տէր եւ տիկին Վահէ Երեւանեան եւ զաւակունք
- Տէր եւ տիկին Սարգիս Երեւանեան եւ զաւակունք
- Տէր եւ տիկին Յարութիւն Գասարճեան եւ զաւակունք
- Տէր եւ տիկին Կարապետ Բարսեղեան եւ զաւակունք
- Երեւանեան ընտանիք
- Տէր Պետրոսեան ընտանիք
- Չաղլասեան ընտանիք
- Էթմէճի ընտանիք
- Քիլիճեան ընտանիք
- Չառուկեան ընտանիք
- Եւ Համայն ազգականներ կը գուժեն իրենց ամուսնոյն, հօր, եղբոր եւ հարազատին՝

ԱՐԱ ԵՐԵՒԱՆԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Կիրակի, 17 Դեկտեմբեր 2000ին, Երեկոյեան, յետ կարճատեւ հիւանդութեան:

Յուզարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի Հինգշաբթի, 21 Դեկտեմբեր, կէսօրէ առաջ ժամը 11:00ին, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, ուրկէ Հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Ֆըրն Շրպիէի Ազգային գերեզմանատունը:

- Ներկայ ընդունիլ իբրեւ մահապղ:
- Ցաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը, «Երեւանեան» շէնք, թի 2 փողոց, Ռապիլ (Ներքին փողոցին յարակից), Ուրբաթ 22 եւ Շաբաթ 23 Դեկտեմբերին:
- Կը խնդրուի փոխան ժողկեպակի նուիրատուութիւններ կատարել քարեփրական հաստատութիւններուն:

տուկ մեկնարանութիւն մը, որ վերջ կը ղնէ բոլոր բանավէճերուն: Ֆըրզլի հարց տուաւ Ելեւմուտքի նախարար Ֆուատ Սինիորայի, թէ ո՞ւր հասած է «Քաղինօ Տիւ Լիլյան» իրախտախաղի մեքենաներու հասոյցին հարցը: Սինիորայ յայտնեց, որ 20 միլիարդ Լոսի անցեալ շաբաթ փոխանցուած է Կեղրոնական Դրամատուն:

Երեսփոխան Սալիմ Սաատէ հարց տուաւ, թէ կառավարութիւնը կը ծրարէ՞ բարեփոխել զինուորական ծառայութեան օրէնքը:

Երեսփոխան Ֆարիտ ինչպէս յիշեցուց այս առնչութեամբ ներկայացուած առաջարկը:

Երեսփոխան Սամիլ Սալիմ իր խօսքին մէջ պահանջեց մարտիկներու ինքնաշարժներու պատճառած կենսոլորտի ապականումին լուծում գտնել: Նիստին ընթացքին խօսք առին նաեւ երեսփոխաններ:

ԱԶԳԱՐԱՐԱԳԻՐ

Առ տիար Յարութիւն Յովհաննէս Իսկէնտրեան:

Լիբանանի Հայոց Թեմի Դատաստանական Խորհուրդս իր 14 Դեկտեմբեր 2000 թուականի կայացուցած Բ. նիստին, որուն դարձեալ ներկայ չգտնուեցաք, զբողեցաւ ձեր ընտանեկան հարցով:

Սոյն ազդարարագիրով, ձեզ կը հրաւիրենք Գ. նիստին, որ տեղի պիտի ունենայ Հինգշաբթի, 28 Դեկտեմբեր 2000, կէսօր առաջ ժամը 11:30ին, քաղաքի Առաքնորդարանի մէջ՝ Ս. Նշան, պաշտպանելու համար ձեր դատը:

Չներկայանալու պարագային, ձեր բացակայութիւնը ներկայութեան համագոր պիտի նկատուի եւ արձակուի համապատասխան վճիռ:

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՐԴ ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅՈՑ

ԱՐՅԱԽԻ ՕԺԱՆԳԱԿՈՒԹԵԱՆ ՖՈՆԾԻՆ

●Իր կնոջ՝ Վարդուհի Պոյաճեանի մահուան առիթով, Անդրանիկ Պոյաճեան եւ զաւակունք 100,000 Լ. ը.

- Վարդուհի Պոյաճեանի մահուան առիթով, Տէր եւ տիկին Նաչիկ Պոյաճեան 50,000 Լ. ը.
- Տէր եւ տիկին Անդրանիկ Սարգիսեան 25,000 Լ. ը.
- Տէր եւ տիկին Վարդան Յակոբեան 10,000 Լ. ը.
- Տէր եւ տիկին Արմէն Թիմիճեան 10,000 Լ. ը.
- Տէր եւ տիկին Յովսէփ Պոյաճեան 10,000 Լ. ը.
- Տէր եւ տիկին Սովետ Յակոբեան 10,000 Լ. ը.
- Տիկին Նարեկ Յակոբեան 10,000 Լ. ը.
- Տէր եւ տիկին Վարդան Խանճեան 20,000 Լ. ը.
- Տէր եւ տիկին Սիսակ Արթիսեան 10,000 Լ. ը.
- Տիկին Սարո Սանտուրեան 15,000 Լ. ը.
- Տէր եւ տիկին Յարոյեան 30,000 Լ. ը.
- Տէր եւ տիկին Նաչիկ Այնթապեան 10 տոլար
- Տէր եւ տիկին Օրբ Վարակոզեան 10 տոլար
- Տէր եւ տիկին Կարապի Դաւիթեան 10 տոլար
- Տէր եւ տիկին տաք. Անդրանիկ Տեմիրճեան 20 տոլար
- Տէր եւ տիկին Վարդան Սանդուրեան 20 տոլար
- Տէր եւ տիկին Պետրոս Չոգազեան 20 տոլար

խաններ Ամար Մուսաուր, Մուսաուր Գապար, Ապտէլ Լաթիֆ Զէյն, Մուսաուր Պըրթաուր, Ֆայէզ Ղըսըն եւ Ապպաս Հաշէմ:

Անոնք արծարծեցին տնտեսական եւ դրամական հարցեր, ներկայացուցին իրենց շրջաններու բարգաւաճման կարիքներն ու երկրագործութեան զիմագրուած ղժուարութիւնները լուծելու անհրաժեշտութիւնը, կառավարութեան պահանջներով այս ուղղութեամբ արգելադրութեան միջոցառումներ որդեգրել:

Խորհրդարանը իր նիստը եզրափակեց վերահաստատելով իր գորակցութիւնը՝ պաղեստինցի ժողովուրդի ազգային իրաւունքներուն վերատիրացման, մասնաւոր նկատելով Լիբանանի հողին վրայ կերտելու եւ պաղեստինցի գաղթականներու տունը արձի իրաւունքներուն, որոնք բազմիցս հաստատուած են միջազգային, արարական եւ իսլամական գերաստիճաններու ընթացքին:

ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

●Չարեհ Կտրճեանի եւ Թալիմ Սաղըրեանի ամուսնութեան առիթով, Լ. Օ. Խաչի «Նայիրի» մասնաձեւի վարչական ընկերութիւնը՝ 50,000 Լ. ը. Լ. Օ. Խաչի «Նայիրի» մասնաձեւի:

ԲԱԽՏԱԻՈՐՈՒՄ

Տէր եւ տիկին Կրէկուար եւ Շուրի Գալուստ բախտաւորուած են առջինեկ առջին զաւակով մը՝

ԼՈՐԻ

16 Դեկտեմբեր 2000

STUDIO **Lantern**

- Կը ստանձնելու յայտնաբերու video
- Նկարահանումներ
- Հեռ. 01-266866
- Եւ 03-895399

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՆ

ՆՈՐ ՏԱՐՈՒՄՆ ԵՒ Ս. ԾՆՈՒՆԴԻ ԱՌԻԹՈՎ

« ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒ ԱՇԽԱՐՀ »

Ամանորի ուրախ հանդէս

նոր ձեւ կը սպասեն

- 2իւնաթոյրը եւ Եօթը Թզուկները
- Փինաթիւն եւ Քաջ Նապարը
- Կարմիր Գլխարկիկը

Եւ ուրիշ շատ շատ հերոսներ

Նոր Տարուան մաղթանքներ կ'ուղղէ ԿԱՂԱՆԴ ՊԱՊԱՆ

Ինչպէս նաեւ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ

«ԿԱՐԿԱՉ» ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ԵՐԳՉԱԽՈՒՄԸ

«ԱՐԵԳ» ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ԹԱՏԵՐԱԽՈՒՄԸ

«ԳԱՅԻԱՆԵ» ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՊԱՐԱԽՈՒՄԸ

Տեղի կ'ունենայ Շաբաթ, 23 Դեկտեմբերին սկսեալ, կէսօրէ ետք ժամը 5:30ին, «Յ. Տէր Մեղրոնեան» քառաբարձին մէջ:

Տոմարը ստանալ ՕԵԼԻՔ Չալքա. Համագայիմի գրախանութիւն «Շաղպիման» կեդրոն եւ GEMEX Գործ Համուր:

ՇՆՆՕԹ - 23, 24 ԵՒ 25 Դեկտեմբերի տոմարը սպասած են:

- 29, 30 Դեկտեմբեր եւ 1 Յունուար 2001ի կայքներու տոմարը ստանալ վերոյիշեալ վայրերէն եւ կրէքէն:

ՊՈՒՇԿԻՆԻ ԼԵՌՆԱՆՑՔԻ ՓԱՊՈՒՂԻԻ ԲԱՑՈՒՄ

16 Դեկտեմբերին տեղի ունեցավ Պուշկինի լեռնանցքին 1,8 քիլոմետր երկարությամբ ունեցող փապուղիին բացումը: Փապուղին, որ 13 քիլոմետրով կը կրճատվի վանաձոր - Ստեփանավան ճամբու ղեկավար անցանկի հատվածը, կը համապատասխանի միջազգային բոլոր չափանիշներուն, ան ունի 5 մետր բարձրություն, 7 մետր լայնք, անհրաժեշտ լուսավորում եւ օդափոխություն: Փապուղիին վերանորոգումը կատարուած է Համաշխարհային Դրամատան ֆինանսավորումով. ծախսուած է մօտ 1,2 միլիոն տոլար, որուն 15 առ հարիւրը յատկացուած է պետական պիւնտէճէն:

Փապուղիի բացման արարողութեան ներկայ էին Հայաստանի վարչապետ Անդրանիկ Մարգարեան, Հայաստանի տարածքային կառավարման եւ քաղաքաշինութեան գործընկերութիւնը համակարգող նախարար Լէոնիտ Յակոբեան, Հայաստանի արդիւնաբերութեան եւ առևտուրի նախարար Կարէն Ճաճարեան եւ Հայաստանի փոխարարմիջոցներու եւ կապի փոխ նախարար Հրանդ Բեգլարեան:

Հայաստանի վարչապետ փապուղիի մուտքին կարմիր ժապաւէնը կտրելէ ետք խօսք առաւ եւ նշեց, որ փապուղիին վերանորոգումը կարեւոր է ոչ միայն տնտեսութեան համար, այլեւ կարգ մը քաղաքական խնդիրներ լուծելու համար: «Փապուղիին կարելիութիւն պիտի ընձեռնէ, որ Տաշիրի եւ Տալիշի շրջանները աւելի աշխուժօրէն ընդգրկուին տնտեսութեան մէջ: Վրաստան մտնելու հիմնական ճանապարհներէն մէկը այս պիտի ըլլայ եւ կրնայ նոյնիսկ մրցել Ալազանի ճամբուն հետ, որ թէեւ նոյն երկարութիւնը ունի, սակայն նոր փապուղին աւելի արագով եւ յարմար է», պարզաբանեց Անդրանիկ Մարգարեան:

Նշեց, որ 70ական թուականներուն կառուցուած այս փապուղին բնաւ չէ վերանորոգուած: Երկրաշարժից ետք եւս վրաստանէն Հայաստան օգնութիւն փոխադրելու հիմնական ուղին էր. բնականաբար ժամանակի ընթացքին չարաչար օգտագործուած եւ բնաւ չնորոգուած այս կառուցը բաւական հինցած եւ քայքայուած էր: Անդրանիկ Մարգարեան ըստաւ, որ այսպիսի շինութիւններուն պէտք է միշտ ուղղորդութիւն դարձնել, պէտք եղած նորոգութիւնները կատարել, որպէսզի անոնք կարելի եղածին չափ երկար դիմանան:

2 ԴԱՏԱՒՈՐՆԵՐ ԴԱՏԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՑՈՒՈՒԹԵԱՆ Կ'ԵՆԹԱՐԿՈՒԻՆ

Հայաստանի նախագահին առնչեց արդարագատութեան խորհուրդը 18 Դեկտեմբերին տեղեկացուց, թէ այս տարուան 11 ամիսներու ընթացքին խորհուրդը քննարկած է առաջին ատենին եւ վերաքննիչ ցատաքննարկուած 12 դատարաններու հարցը: Անոնցմէ երկուքը ենթարկուած են կարգապահական պատասխանատուութեան, իսկ մնացեալներուն պարագային, խորհուրդը բաւարարուած է հարցի քննարկութեամբ:

Անցեալ տարուան ընթացքին խորհուրդը ոչ մէկ դատաւորի հարց քննարկած է:

ԵՐԱՇԻՆ ԿՆԱՍԵՐԸ ԴԱՐՍԱՆԵԼՈՒ ԸԱՍԱՐ

ԳԵՐՄԱՆԻԱ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ԿԸ ՏՐԱՄԱԴՐԻ 300 ԹՈՆ ԱԼԻԻՐ

Հայաստանի գիւղատնտեսութեան նախարարութիւնը 18 Դեկտեմբերին յայտնեց, թէ «Մուսուղ» աշխատանքի դիմաց» ծրագրին շրջագիծին մէջ Գերմանիոյ կառավարութիւնը Հայաստանի մէջ կործանելու ամէնէն աւելի տուժած շրջաններուն պիտի տրամադրէ 300 թոն ալիւր:

Նախարարութիւնը նաեւ կը նշէ, որ Հայաստանին 300 հազար ետրոս արժողութեան արտադրութիւնը եւ անասնակեր պիտի յատկացնէ նաեւ Վրաստանի մէջ գործող «Ֆրանսական ժողովրդական Օգնութիւն» կազմակերպութիւնը: Իսկ Հայաստանի եւ Յունաստանի կառավարութիւններուն միջեւ ստորագրուած համաձայնագիրով, իբրեւ օգնութիւն, Հայաստանին պիտի յատկացուի 10 հազար թոն ցորեն եւ 3 հազար թոն պարարտանիւթ:

«ՉՈՒԱՐԹՆՈՅ»Ի ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՍԱՐԻ ՆՃԱՆԱԿՈՒՄ

Հայաստանի քաղաքացիական օդանավորութեան գլխաւոր վարչութեան պետին 18 Դեկտեմբերի հրամանով, «Չուարթնոյ» միջազգային օդակայանի գլխաւոր տնօրէնի ժամանակաւոր պաշտօնակատար նշանակուած է Ադամ Փափազեան:

Վարչութեան տեղեկատուութեան եւ մամուլի կեդրոնը կը յայտնէ, որ Ադամ Փափազեան 1972 թուականին աւարտած է Երեւանի Ճարտարագիտական Համալսարանի մեքենաշինութեան բաժանմունքը, տնտեսական դեկաւար աշխատանք տարած է Նուռնուսի քարերու մշակման եւ Երեւանի մեքենաշինական գործարաններուն եւ «Աւստ ՎԱՁ» հանրապետական կեդրոնին մէջ, իսկ 1995էն 1999 թուականներուն եղած է «Անի» պանդոկին տնօրէնը:

ՀԱՄԱԿԱ ՍԱՍՈՒՆԵԱՆԻ ԸԱՍՅԵՆ
 HAMPIG SASSONIAN C- 88440
 CSP - L.A.C. D -5- 232 44750
 60-TH ST. WEST LANCASTER, CA, 93536
 USA

ԱԺՄԱՐՏԱԿԱՐԳ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ ՈՐՈՇՈՒՄ Կ'ԸՆԳՈՒՆԻ ԻՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒՂԵԳԻԾԻՆ ՄԱՍԻՆ

Ազգային ժողովրդավարական Միութեան (ԱԺՄ) 12րդ արտահերթ համագումարը, որ սկսած էր 2 Դեկտեմբերին, 2 շաբթուան ընդմիջումէ մը ետք, Երեւան, 16 Դեկտեմբերին, ամբողջ օրը տեւած բեռն քանակէն իր-բեւ արդիւնք, յաջողեցաւ որոշում ընդունել հայրենի քաղաքական կեանքին մէջ յայտնուած կուսակցութեան ունենալիք տեղիին եւ դերին մասին:

«Իշխանական համակարգին մէջ ստեղծուած է միտքերու իրազեկումը, երբ պետական գործընթացներուն բոլոր լծակները, հետեւաբար նաեւ՝ ամբողջ պատասխանատուութիւնը, կեդրոնացած են Հայաստանի նախագահին, ինչպէս նաեւ անոր կողմէ նշանակուած եւ Ազգային ժողովին մէջ առկայ մեծամասնութեան զօրակցութիւնը վայելող կառավարութեան ձեռքբերում մէջ: Իշխանութեան կողմէ հնչող միտքերու լծակները գտելու են վստահութիւն ներշնչող ծրագրային ղրոյթներէ, հասարակութեան պետական եւ ազգային խնդիրներուն եւ անոնց լուծման շուրջ համախորհրդային գաղափարներէ, եւ առաջին հերթին պայմանաւորուած են իշխանութեանը պահանջներով»:

նութիւնը պահելու միտքով», այսպէս բնութագրուած է Հայաստանի ներկայ իրավիճակը համագումարի մասնակիցներուն ձայներու մեծամասնութեամբ ընդունուած փաստաթուղթին մէջ, որուն նախագիծը ներկայացուցած էր ԱԺՄ նախագահ Վազգէն Մանուկեան:

ԱԺՄ մասնավորապէս կ'որոշէ. «Ներգրուելով հասարակութեան կարողութեան լայն շրջանակներ» մշակել եւ հանրութեան ներկայացնել երկրի ընկերային-տնտեսական իրավիճակի բարելաման միտող այլընտրանքային ծրագրեր եւ Ազգային ժողովի ԱԺՄ խմբակցութեան միջոցով առաջարկուող օրինագիծներ, որոնք իրագործման համար համագործակցելու շահագրգիռ ուժերուն հետ»:

Նշեց, որ մինչեւ Երեւան օր կային համագումարի որոշման երկու հարցի նախագիծերը եւս: Առաջին նախագիծին մէջ, զոր ներկայացուցած էին Երեւանի քաղաքացիական պետական եւ ազգային խնդիրներուն եւ անոնց լուծման շուրջ համախորհրդային գաղափարներէ, եւ առաջին հերթին պայմանաւորուած են իշխանութեանը պահանջներով»:

հին եւ կառավարութեան նկատմամբ» եւ «վճռակալութեան կը յայտնէ, վերանուստեղծութեանը մասնադրական ճանապարհներով արմատապէս փոխելու ժողովուրդին պարտագրուած եւ երկրին առաջընթացը խոչընդոտող իշխանութեան համակարգը»:

Իսկ Մէլյան Աւագեանի ԱԺՄ վարչութեան ներկայացուցած նախագիծին մէջ նշուած էր, որ Հայաստանի մէջ տնտեսա-քաղաքական նոր իրավիճակ ստեղծուած է, եւ կուսակցութեան համար աւելի արդիական գործելակերպ մը անհրաժեշտ է:

Գուցարկութեան միջակէս առաջ վարչութիւնը հանեց իր առաջարկած նախագիծը եւ ձայներով մեծամասնութեամբ ընդունուեցաւ Վազգէն Մանուկեանի առաջարկած տարբերակը:

ԱԺՄ համագումարը չէ աւարտած. տակաւին քննարկման առարկայ են կանոնադրական փոփոխութիւններու եւ նոր վարչութեան ընտրութեան հարցերը: Համագումարը պիտի շարունակուի յառաջիկայ տարւան Յունուար ամսուան կէսերուն:

ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ՝ 330 - 340 ՎՏԱՆԳՈՒԱԾ ՇԷՆՔԵՐ

Երեւանի քաղաքացիական Շինարարութիւն, բարենորոգում» ընկերութեան տնօրէն Աշոտ Սարգսեան 15 Դեկտեմբերին տեղեկացուց, որ մասնագիտական ուսումնասիրութիւններու իբրեւ արդիւնք՝ Երեւանի մէջ վտանգուածութեան չորս սանդղակով առանձնացուած են 330 - 340 շէնքեր: Առաջին կարգի վտանգուած շէնքերը, որոնք են թակայ են փլուզումի, 34 հատ են, որոնցմէ 28 հատը կը գտնուի Ալափնեակի մէջ:

Աշոտ Սարգսեան ըստաւ, որ վերջերս կառավարութեան որոշումով հատուցուած ստացած են 4 վտանգուած շէնքերու 118 բնակիչները: Նախորդ տարի վերաբնակեցուած են երկու շէնքերու բնակիչները:

Ըստ Սարգսեանի, առաջին, երկրորդ եւ երրորդ կարգի վտանգուած շէնքերը ենթակայ են հիմքերու գորացման: Համապատասխան հիմնարկի մը կողմէ կը մշակուին վերականգնման տարբեր ծրագրերը: Ստաւոր հաշիւներով, իւրաքանչիւր շէնքի վերականգնման համար անհրաժեշտ է 50 միլիոն դրամ: Ըստ Ա. Սարգսեանի, շէնքերը այս վիճակին հասած են տարիներ շարունակ հիմքերու վերանորոգման բացակայութեան եւ որոշուած ժամկէտէն աւելի օգտագործման (որը շէնքերը, ըստ նախագիծի, սահմանուած են 50 տարուան համար), ինչպէս նաեւ վնասուած ջրողիկներու շէնքերու ժամային հիմքերը խարխլած ըլլալուն պատճառով:

Ա. Սարգսեան ըստաւ, թէ իբրեւ գործուն երկրաշարժի գօտի, բնակչութիւնը պէտք է զանազան շէնքերու վտանգուածութիւն եւ երկրաշարժային

կայունութիւն հասկացողութիւնները: Մինչեւ 1988ի երկրաշարժը շէնքերը նախատեսուած էին 7 պայանոց շարժերու համար, իսկ 90ականներուն շէնքերու երկրաշարժային կայունութիւնը բարձրացուած են երկու աստիճանով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՀԱՍՏԱՆԵ ԶԲՕՍԱՇՐՋՈՒԹԵԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԱՎԱԼՈՒԹԵԱՆ ԻՐԱՎԱՍՈՒԹԻՒՆՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱՌՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Վերջերս Հայաստանի կառավարութիւնը հաստատած է զբօսաշրջութեան զարգացման ազգային գործակալութեան հիմնական իրաւասութիւններն ու պարտաւորութիւնները, որոնք կը միտին զբօսաշրջութեան շուկայի ուսումնասիրման, զբօսաշրջական արտադրութեան արտահանման, ինչպէս նաեւ՝ արդէն իսկ ձեւաւորուած զբօսաշրջութեան զարգացման ծրագրի շրջանակներուն մէջ զբօսաշրջական կազմակերպութիւններու միացեալ գործունէութեան ծաւալման:

Այդ գործակալութեան առաջնակարգ խնդիրներն են զբօսաշրջիկներու ընդունումը եւ այն ծառայութիւններու եւ պարանշններու արտածումը, որոնք կը վերաբերին Հայաստան զբօսաշրջիկներու այցելութեան:

HALCO ՄԵԼԵՈՆԵԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ

ELECTRIC MOTORS REDUCTION GEAR MOTORS A. C. & D. C. REDUCTION GEARS VACUUM PUMPS WATER PUMPS POWER TOOLS ELECTRIC WINCHES PNEUMATIC WINCHES STAINLESS ELECTRODES	PNEUMATIC DIRECTIONAL VALVES SOLENOID VALVES HYDRAULIC DIRECTIONAL VALVES SOLENOID VALVES RELIEF VALVES PUMPS & PISTONS
---	--

ԵՒ ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԻՏՐԱԼԻՔ, ՓՆԵՍՍԱԹԻՔ
 ՈՒ ԵԼԵԿՏՐԱԿԱՆ ՄԱԹԵՕՐԵՐ, ՄԱՏՁԵԼԻ ԳԻՆԵՐՈՎ:

Chromo St. Tel.: 01-254144, 01-254145, 01-254134, 03-666840, 03-666850.

ԾԱՆՈՒՅՈՂՆԵՐՈՒ ՈՒՇԱԳՐՈՒԹԵԱՆ
 «Ազգային մէջ ազգային կամ առնչուողական ծանուցումներ հրատարակել փափաքողներէն կը խնդրուի ծանուցումի ընթացքը ընթանցի գիրով (հաստատութեան պարագային՝ նախընտրաբար պաշտօնակալ թուղթի վրայ, եւ՝ հաստատուած) ցերեպայցեղ: «Ազգային» ծանուցումներու գրասենեակը:

ՄԱՐԻ - ՌՈՉ ԱՐՈՒՄԻՖԵԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑ «ԿԱՐՄԻՑ ՄԻՆՉԵՒ ՏՐՈՅԱ» ԵՒ «ՏԱՏՐԱԳՈՄԻ ՀԱՐՍԸ»

Կիրակի, 17 Դեկտեմբերի երեկոյեան ժամը 7:00էն առաջ իսկ լիբանանահայութեան մշակութային հասարակութեանը ամբողջութեամբ լեցուցած էր «Յ. Տէր Մելքոնեան» թատերասրահը:



Մարի - Ռոզ Արուստեան՝ կատարումի ժամանակ

Օրուան յայտագիրը լիբանանահայ գեղարուեստատիրոհներու միջոցով նախագիծին մէջ տնտեսա-քաղաքական նոր իրավիճակ ստեղծուած է, եւ կուսակցութեան համար աւելի արդիական գործելակերպ մը անհրաժեշտ է:

Գուցարկութեան միջակէս առաջ վարչութիւնը հանեց իր առաջարկած նախագիծը եւ ձայներով մեծամասնութեամբ ընդունուեցաւ Վազգէն Մանուկեանի առաջարկած տարբերակը:

ԱԺՄ համագումարը չէ աւարտած. տակաւին քննարկման առարկայ են կանոնադրական փոփոխութիւններու եւ նոր վարչութեան ընտրութեան հարցերը: Համագումարը պիտի շարունակուի յառաջիկայ տարւան Յունուար ամսուան կէսերուն:

Սառ Զրաքանի ընդհանուր արուեստագիտութիւնի Մարի - Ռոզ Արուստեան օճան է Հայկ: Աւարտած է Երեւանի գեղարուեստա-թատերական հիմնարկը: 15 տարեկանէն սկսեալ քսանհինգ տարի շարունակաբար ծառայած է հայ բեմին: Ան իրաւաստակալ կարողութեամբ հասարակ արժանի է չափաւոր երկեր եւ գանձեր կը կարճ ժամանակահատուկով սեփականութիւնը: Մարի - Ռոզ Արուստեան իր արուեստին միջոցով հայկական թէ օտար շրջանակներէն ներս կը ծառայէ Հայ Դատի ծանօթացման ու հայապահպանման աշխատանքներուն:

Գրական - գեղարուեստական յաճախումի մը արձանով բացման խօսքը կատարեց Սեդա Խորշիդեան, որ հակիրճ կերպով ներկայացուց արուեստագիտութիւնը, ինչպէս նաեւ՝ յաճախումի գործունէութիւնը:

Այս բեմ բարձրագույն Մարի - Ռոզ Արուստեան: Ան յայտագիրին առաջին մասով ներկայացուց Վարդէր Պետրոսեանի «Կարսից միջին Տրոյա» գործը, իսկ երկրորդ մասով՝ Կոստան Զարեանի «Տատրագոմի հարսը» պիւնը:

Արուեստագիտութիւնի ամբողջ երկու ժամ իր տաղանդին ու վարպետութեան արտայայտութիւնը եղող պարուստեամբ ներկայանալով պարուստեան գեղարուեստական իրաւաստակալ ներկայացումը, որ ասմունքը մը շատ աւելին էր: Վարդէր Պետրոսեանի «Կարսից միջին Տրոյա» գործին մատուցումով ան հանդիսատեսները փոխադրեց հեղինակին այցելած Արեւմտահայաստանի երբեմնի շէն ոստանները՝ Կարս, Կարին, Պոլս պատմական Տրոյա - Եփեսոս քաղաքը: Արուեստագիտութիւնը ընդմէջէն ներկայանալով ատենուստեաները փոխադրեց հեղինակին այցելած Արեւմտահայաստանի երբեմնի շէն ոստանները՝ Կարս, Կարին, Պոլս պատմական Տրոյա - Եփեսոս քաղաքը: Արուեստագիտութիւնը ընդմէջէն ներկայանալով ատենուստեաները փոխադրեց հեղինակին այցելած Արեւմտահայաստանի երբեմնի շէն ոստանները՝ Կարս, Կարին, Պոլս պատմական Տրոյա - Եփեսոս քաղաքը: Արուեստագիտութեան հասնող տիպարային ակնթարթային փոփոխութիւններով մարմնավորեց հիւրացիները, ֆետայիները, Յովանը, Սանանը, քիւրը:

Նախքան «Տատրագոմի հարս»-ին ներկայացումը, Մարի - Ռոզ Արուստեան մանրամասնութեամբ ներկայացուց Կոստան Զարեանի կենսագրութիւնը: Նշեց, որ յառաջիկայ քանի մը շաբաթներուն ընթացքին, արուեստագիտութիւնը պիտի այցելէ Միջին Արեւելքի հայկական գաղութները: Ան վերջերս ելույթ ունեցած է Ատէ Եգիպտոսի մէջ:

ARA TRAVEL IATA
ARMENIAN AIRLINES
SALES AGENT,
 ՈՒՐԱՒՈՒԹԵԱՐ ԿԸ ՅԱՅՏԵ ԻՐ ՅԱՐԳՈՅ ՅԱՃԱՒՈՐԴՆԵՐՈՒՆ, ՈՐ Կ'ԱՊԱՏԱՆԸ

ՊԵՅՐՈՒԹ - ԵՐԵՒԱՆ - ՊԵՅՐՈՒԹ
 ԵՒ ԸԱԼԵՊ - ԵՐԵՒԱՆ - ԸԱԼԵՊ
ARMENIAN AIRLINES ընկերութեան
 • օդանավային տոմսեր • պարանշն փոխադրութիւն

ԱՐԱ ԹՐԱՎԵԼ,
 Պոլս՝ Համուտ, Գամակուան շէնք,
 Հեռ. 266594 - 261296 : FAX: 261296

ՆՈՐ ՀԱՆԳՐՈՒԱՆԸ

«ԵՐԲԵՄՆ ՊԻՏԻ ԶՈՂԵՆՔ ՄԵՐ ՆԱԽԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ, ԲԱՅՑ ՈՉ ԵՐԲԵՔ՝ ՀԱՄՈՉՄՈՒՆՔՆԵՐԸ...»

Զեմ յիշում, թէ ում գրչին է պատկանում վերոգրու- եալ մէջըբերումը, որը ուղեմնիչ կարող է հանդիսանալ յատկապէս հասարակական գործիչներին համար, մանա- ւանդ՝ երբ նրանք պէտք է ղիմագրաւեն քաղաքական ու ընկերային իրողութիւնները եւ ճշդ են իրենց կողմ- նորոշումները:

Վերջին Ընդհանուր ժողովից յետոյ Հ. Յ. Դ-ն աւելի ընդլայնեց իր գործունէութեան ասպարէզը՝ կուսակ- ցութեան կենտրոնական գրասենեակը տեղափոխելով Հայաստան: Այս փոփոխութիւնը որոշակի դժուարու- թիւններ առջեւ Լստ այլմ, գործող իւրաքանչիւր կուսակ- ցութիւն պարտաւոր է իր հիմնախնդիրները դուրս բե- րել կուսակցական նեղ շրջանակի սահմաններէն եւ աչ- քի առաջ ունենալ նաեւ միջազգային խնդիրները, որ- պէսզի կարողանայ դիմագրաւել իր առջեւ ծառայած հրամայականները: Ամէն մէկ կուսակցութիւն պարտա- ւոր է ամբողջովին նուիրուել ժողովրդին՝ նրա առաջ- նահարձութիւնները դարձնելով իրենց, զլիսաւորապէս հետաժողովրդ ընակչութեան առօրեայ պահանջներն ու խնդիրները: Այլ խօսքով՝ կուսակցութիւնը ոչ միայն պիտի առաջնորդի ընակչութեանը, այլեւ առաջնորդը- ի նրա կողմից: Այս կանոնը խախտող կուսակցութիւնը կը դառնայ լուսանցքային:

Մենք ապրում ենք պատմական փոփոխութիւնների ժամանակաշրջան եւ պարտաւոր ենք նկատի ունենալ ներկայի մարտահրաւէրները: Քաղաքական գործա- ցունները, աշխարհակարգի նորանոր դասաւորումնե- րը, գիտութեան ու արհեստագիտութեան առաջընթաց վերելքը եւ դրանց առաջ բերած հակասութիւններն ստեղծում են անկայուն եւ փոփոխական վիճակներ ըն- կերային ու հասարակական կեանքի գրեթէ բոլոր բնա- գաւառներում:

